ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԼԱԴԻՄԻՐ ՍՊԻՎԱԿՈՎԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՄԻՐԵՑԵԱԼ ԲԱՐԵԿԱՄՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԼԱԴԻՄԻՐ ՍՊԻՎԱԿՈՎ, ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹԻՒՆ

Ուրախ սրտով տեղեկացանք, որ Ձեր ծննդեան 60-ամեայ յոբելեանի առիթով Մոսկուայում կազմակերպուում է մեծարման հանդիսութիւն: Համայն հայութեան հոգեւոր Կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքները:

Ձեր կեանքի նշանակալի այս հանգրուանը Դուք դիմաւորում էք մեծ վաստակով, ճանաչուած ամբողջ աշխարհում ու սիրուած երաժշտասէր հասարակայնութեան կողմից եւ գնահատուած բազմաթիւ մրցանակներով ու պարգեւներով: Դուք անխոնջ նուիրեալն էք երաժշտական արուեստի, որը թափանցելով հոգիներից ներս, ջերմացնում ու ազնուացնում է մարդկային ներաշխարհը:

Գոհունակութիւն է Մեզ համար նշել, որ Դուք Ձեր սքանչելի նուագախմբի համերգային կատարումներով Ձեր արուեստը ներկայացրել էք նաեւ մեր ժողովրդին՝ բազմաթիւ անգամներ լինելով հիւրաւորց մեր երկրում: Մեր ժողովուրդը գիտի Ձեզ նաեւ որպէս հաւատաւոր բարեգործի եւ Հայաստանի մեծ բարեկամի: Մեծ երաժշտի եւ ազնուահոգի բարերարի Ձեր կերպարը օրինակ է բազմաթիւ հայ շնորհալի երեխաների համար, ովքեր հովանաւորուում են Ձեր հաստատած բարեգործական հիմնադրամի կողմից, որպէսզի իրենց կարողութիւնները զարգացնելով, ծառայեն երաժշտութեանն ու արուեստին: Հայ ժողովուրդը ընդմիշտ երախտապարտ է Ձեզ ու աղօթող Ձեզ համար՝ միշտ յիշելով 1988-եան աղէտալի երկրաշարժի դժուարութիւնների մէջ Ձեր աջակցութիւնը: Բարեգործական Ձեր համերգների հասոյթները, որ սիրով տրամադրեցիք երկրաշարժից տուժած հայորդիներին, նաեւ բարոյական մեծ աջակցութիւն եղան համայն մեր ժողովրդի համար:

Մեծարգոյ պրն Սպիվակով, Մենք քաղցրութեամբ ենք յիշում Մեր հանդիպումները Ձեզ եւ Ձեր ազնիւ կողակցի՝ Տիկին Սաթենիկի հետ, որի ծնողներին ճանաչել ենք երկար տարիներ եւ բազմաթիւ բարի յիշողութիւններ ունենք Մեր հոգում նրա լուսահոգի Հայրիկից՝ Զարեհ Սահակեանցից:

Երախտարժան Յոբելեար, Ամենայն հայոց հաւատքի կենտրոն Սուրբ Էջմիածնից բերելով Ձեզ Մեր բարձր գնահատանքը, սիրով ընդառաջում ենք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ

խնդրանքին եւ Ձեր յոբելեանի առիթով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Հայաստաննեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած հանապազ աջակից ու օգնական լինի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, երջանկութիւն եւ ամենայն բարիք:

Թող ընտանեկան Ձեր յարկը շնորհընկալը լինի երկնապարգեւ շնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 256